



ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՒ
2003 թ.
ՀՆԿԵՍՔԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՆՈՒՄՆՈՒՄ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԿՐԻ ԵՎ ԳՐԱՏԱՐՎՎԻԳ
«ՍՅՈՒՆԻՅԱՍ ԱՇԽԱՐԿ» ԱՄԽԱՆԱԾՎ
ՊԱՏԱՆԱՍՏՈՒԹՅԱՐ ԸՎԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպագրանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
25.04.2012թ.:



ՈՒՐԲԱԹ

27 ԱՊՐԻԼԻ 2012Թ

№ 11 (252)

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՀՀ նախագահի խոսք

Տարիներ շարունակ հանրապետական կուսակցությունն իր ուժն ու կարողությունը ներդրել է Հայաստան պետության կայացման գործին: Ողջ հանրությանը մենք պետական ինստիտուտներն ենք զարգացրել, ամրացրել մեր երկիրն ու ամրապնդել նրա դիրքն աշխարհում: Այսօր ունենք մի իրականություն, երբ պետությունը կայացել է այնչափ, որ մեր կարողությունների մի զգալի մասն արդեն կարող ենք ուղղել այլ՝ ոչ պակաս կարևոր խնդիրների լուծմանը: Մեր գործունեությունն այսօրվանից առավելապես ուղղվելու ենք դեպի մարդը, դեպի յուրաքանչյուրը, դեպի Հայաստանի Հանրապետության քաղաքացին: Տնտեսական վերելքը դառնալու է կոնկրետ աշխատանք կոնկրետ մարդու համար, եւ մարդկանց աշխատանքով ու արժանապատիվ վարձատրությամբ ապահովելը՝ առաջնային նպատակ: Միասին ամրացրեցինք պետությունը, միասին էլ կարող ենք լուծել մարդուն հուզող առաջնային խնդիրները: Մեզ փոփոխություններ են անհրաժեշտ: Այդ փոփոխություններն իրականացնողները մենք ենք, բոլորս միասին՝ Հանրապետականի փորձով եւ առաջնորդությամբ: Հինգ տարի առաջ մենք ասում էինք՝ Քեզ համար, Հայաստան: Հիմա արդեն հասել ենք այն հանգրվանին, երբ վստահորեն պնդում ենք՝ Ավելի լավ Հայաստան յուրաքանչյուրի համար:



Հայաստանն ամեն հաջորդ օրը պիտի ավելի լավը լինի, քան նախորդ օրն էր: Մենք բոլորս պիտի գործենք հենց այդ տրամաբանությամբ, ավելի լավ Հայաստանի տրամաբանությամբ, բարեկեցիկ Հայաստանի, հզոր Հայաստանի: Հայաստանի, որտեղ ամեն ոք կարող է իրացնել իր հնարավորությունները եւ ոչ թե լավ կյանքի փնտրտուքով հայտնվել արտասահմանում: Որտեղ մարդն ունի աշխատանք ու արժանապատիվ վաստակ: Որտեղ յուրաքանչյուր երեխա կարող է որակյալ ուսում ստանալ, իսկ յուրաքանչյուր տարեց մարդ՝ կենսաթոշակ, որը կարող է ապահովել արժանապատիվ կյանք: Ավելի լավ Հայաստան՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու համար: Ավելի լավ Հայաստան՝ երեխաների, հայրենիքը պաշտպանողների, աշխատողների, աշխատել ցանկացողների, հողագործների, ստեղծագործողների, ձեռնարկողների, տարեցների, հաշմանդամների համար: Ավելի լավ Հայաստան՝ օտարության մեջ հայտնված զավակներին վերադարձնելու համար, տունդարձի համար: Ավելի լավ Հայաստան՝ համայն հայության իղձերի իրականացման համար:

ՄԵՐԾ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵՐ ԿԱՏԱՅՐՈՒԹՅԱՆ ՔՎԵՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԻՆ



ՀՀ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ուղերձը մարզի ընտրողներին

Սիրելի հայրենակիցներ
Այլեւս անժխտելի է փաստը, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը երկրի քաղաքական համակարգում գրավել է ուրույն, արժանավոր ու ամուր տեղ եւ իր ծանրակշիռ ներդրումն է բերում Հայաստան երկրի զարգացման, հարատեւման ու ազգային խնդիրների լուծման գործին: Կուսակցությունն արդեն ազգամասոտ հետք է թողել եւ դեռ կթողնի մեր ժողովրդի պատմության մեջ: Այսուհետ հայ ժողովրդի պատմության էջերում «ՀՀ» հապավումը, «Հայաստանի հանրապետական կուսակցություն» բառակապակցությունը կհամարվեն ու կզուգորդվեն հայրենասիրության, ազգային արժանապատվության, քաղաքական խնդիրների քաղաքակիրթ եւ բարեհաջող լուծման գործընթացների հետ: Տարեցտարի ավելի համոզիչ է դառնում մեր ընտրած ճանապարհի ճշմարտացիությունը, որոշակիացում է ավելանում են մեր հաջողությանը՝ **Շարունակությունը՝ էջ 2**

Անցած մի քանի տարիների ցույց տվեց, որ Հայաստանի կառավարությունն աստիճանաբար, բայց հեղուկակալորեն լուծում է Սյունիքի մարզի առջեւ ծառայած, տարիների խորքից եկող հիմնախնդիրները, բոլորիս մտահոգությունները: Եվ դա մեզ համար հավելյալ հիմք է՝ ասելու, որ Սերժ Սարգսյանի գլխավորած Հայաստանի հանրապետական կուսակցությունն է այն քաղաքական հզոր ու փորձված ուժը, որ կարող է լուծել ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Սյունիքի հիմնախնդիրները: Ուրեմն՝ մեր վստահության քվեն՝ Հայաստանի հանրապետական կուսակցությանը, մեր վստահության քվեն եւ զորակցությունը՝ Սերժ Սարգսյան առաջնորդին: Բարի ընտրություն բոլորիս:

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐԱԳԻՐԸ

- 1. Ծրագրում ենք տնտեսական աճի նպատակադրումներից անցնել տնտեսական զարգացման հայեցակարգին: Այդ գործընթացում պետք է ազատորեն ընդգրկվեն բոլոր կարող մարդիկ:
- 2. Շարժվելու ենք «Հարմարավետ գյուղ, զարգացող գյուղատնտեսություն» տրամաբանությամբ: Մենք պարտավոր ենք, բարձրացնելով գյուղատնտեսության արդյունավետությունը, գյուղում զուգահեռաբար ստեղծել կյանքի համար հարմարավետ պայմաններ:
- 3. Պարզեցնելու ենք հարկային վարչարարությունը, աստիճանաբար վերացնելու ենք շահութահարկի նվազագույն շեմը: Փոքր եւ միջին բիզնեսի համար ձեւավորելու ենք պարզեցված հարկային դաշտ: Մաքսային արժեքի որոշման եւ մաքսագերծման գործընթացը համապատասխանեցնելու ենք եվրոպական չափանիշներին:
- 4. Սոցիալական քաղաքականության մեջ փոփոխությունը միտված է լինելու անհավասարություն ծնող պատճառների վերացմանը: Առաջին հերթին դա նշանակում է աշխատունակ խոցելի խավերի համար հասանելի դարձնել կրթությունը եւ աշխատանքը:
- 5. Շարունակելու ենք ավելացնել երրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդին պետական աջակցության ծրագրերի ծավալները:
- 6. Առողջապահության ոլորտում մեր քաղաքականության փոփոխությունն ուղղված է լինելու հիվանդությունների կանխարգելմանը՝ առողջ կենսակերպի համար պայմաններ ստեղծելու միջոցով: Առաջին անգամ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար երաշխավորելու ենք սրտի անհետաձգելի վիրահատությունը:
- 7. Պետության կողմից երաշխավորված նվազագույն ինժեներական կրթությունից անցում ենք կատարելու երաշխավորված անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանը: Կրթությունը հասանելի դարձնելու նպատակով անվճար կրթություն ենք ապահովելու սոցիալապես անապահով խավերի համար (ներառյալ բարձրագույն կրթությունը):
- 8. Բուհերում ուժեղացնելու ենք գիտահետազոտական քաղաքակրթիչը, ներդնելու ենք գիտության ֆինանսավորման ժամանակակից մեթոդներ, առաջնային ուշադրություն ենք դարձնելու հայագիտության զարգացմանն ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:
- 9. Մշակութային քաղաքականությունն ուղղված է լինելու այնպիսի տիպարների ձեւավորմանն ու լայն ներկայացմանը, որոնք օգնելու են մեզ հանրային ուղեցույց **Շարունակությունը՝ էջ 2**



ՀՀ ՆԱԽՆԵՏՐԱԿԱՆ ՕՐԱԳԻՐԸ

Հասկածներ

Սկզբը՝ էջ 1

դարձնել բարոյական չափանիշները, համեմատելիությունը, աշխատանքին և սեփական ուժերին ապավինումը, փոխադարձ վստահությունը:

10. Պատշաճ բնապահպանական մոտե-

ցումները լինելու են քաղաքաշինական կամ գործարար նախագծերի իրականացման պարտադիր պայման:

11. Իրականացնելու ենք Երեւանի բեռնափաման համալիր ծրագիր՝ պետական, նաեւ կրթական, մշակութային ու տնտեսական առանձին գործառույթներ բաշխելով հանրապետության մյուս տարածքներում, բարձրացնելով այլ քաղաքների դերակատարությունը հանրային գործընթացներում: Մայրաքաղաքին կվերադարձնենք իր ճարտարապետական շունչը՝ օրենքով բացառելով Երեւանի

կենտրոնում նրա պատմությանն ու նկարագրին անհարիր կառուցապատումը:

12. Պետական աշխատանքը գրավիչ դարձնելու նպատակով շարունակելու ենք սոցիալական երաշխիքների տրամադրման քաղաքականությունը:

13. Պետությունը զորացրվողների համար ապահովելու է աշխատանքի և արտոնյալ ուսման հնարավորություններ:

14. Մենք պետք է հաղթահարենք այն քաղցկեղը, որով հիվանդ է մեր հասարակությունը և որը կոչվում է կոռուպցիա: Այս

ճանապարհին կիրառվելու են և վերահստահական, և մյուս բոլոր օրինական մեթոդները:

15. Կարճաժամկետ հեռանկարում ուստիկանության, դատախազության և դատաւանների գործունեությունը մեր երկրում կոչված է լինելու ապահովել ցանկացած անձի իրավունքների և շահերի համակողմանի պաշտպանությունը, երաշխավորել հասարակության յուրաքանչյուր անդամի համար արդարադատության մատչելիությունը և յուրաքանչյուր վեճի արդարացի լուծումը:

ՄԵՐ ՎԱՏԱՅՈՒԹՅԱՆ ՔՎԵՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԻՆ

ՀՀ Սյունիքի մարզային խորհրդի նախագահ, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ուղերձը մարզի ընտրողներին

Սկզբը՝ էջ 1

թյունները: Եթե հետագայում հայացք ձգենք մեր անցած ուղուն, ապա կտեսնենք, որ զգալի են ձեռքբերումները և անուրանալի՝ մեր ծառայությունները ժողովրդի հանդեպ:

Հանրապետությունում և արդեն իսկ կուսակցությունների միջազգային բեմահարթակի վրա ՀՀ-ն նպաստել և նպաստում է քաղաքական մշակույթի որոշակի տարրերի ձեւավորմանը: Պահպանելով մեր հավատամքն ազգային գաղափարախոսության և ազգային ու պետական շահերի հանդեպ, գաղափարական պայքարում միշտ էլ պահպանել ենք մեր էթիկան՝ լավ հարաբերություններն այլ կուսակցությունների ու քաղաքական ուժերի հետ:

Հանրապետական, մարզային և համայնքային իշխանության մեջ մենք ստանձնել ենք պատասխանատվություն և, կարծում են, պատվով ենք կատարում մեր պարտականությունները:

Անցած տարիներին արված աշխատանքների, Սյունիքի մարզում առկա խնդիրների ու առաջնահերթությունների մասին, որպես ՀՀ Սյունիքի տարածքային խորհրդի նախագահ և Սյունիքի մարզպետ, առիթ են ունեցել բազմիցս բարձրաձայնել՝ սկսած տարածաշրջանային խորհրդակցություններից ու համագումարներից մինչև ՀՀ կառավարության միստեր:

Հայաստանի հանրապետական կուսակցության ծանրակշիռ դերակատարությամբ Սյունիքի մարզում են համայնքներում վերջին հինգ տարվա ընթացքում հսկայական աշխատանք է կատարվել, որոնք վերաբերում են համայնքների ջրամատակարարման, ճանապարհաշինության, ասֆալտապատման, գազիֆիկացման, կրթական, մշակութային ու առողջապահական, ենթակառուցվածքների ու քաղաքաշինական այլ կարևոր հիմնախնդիրների լուծմանը: Ներկայացնեն ընդամենը մի քանի ցուցանիշ, որոնք անառարկելիորեն ապացուցում են ասվածի հավաստիությունը: Այսպես՝ 2007-2011 թվականներին՝ ընթացիկ զենքով, արդյունաբերական արտադրանքի ծավալը Սյունիքի մարզում աճել է 44.5%-ով, էլեկտրաէներգիայի, գազի, հանքային ջրերի և ընպելիքների արտադրության և բաշխման ծավալը՝ 1,5 անգամ, մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը՝ 1,4 անգամ: Մարզի կազմակերպություններում մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը, պայմանավորված մարզում գործող խոշոր հանքարդյունաբերական ձեռնարկություններում վճարվող բարձր աշխատավարձերով, 2011թ. կազմել է 148776 դրամ՝ 43.0%-ով ավելի, քան 2007 թվականին (28.9%-ով ավելի հանրապետության համապատասխան



16 հոկտեմբերի 2010թ., ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցում է Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակին նվիրված փոստապարտությունը:

ցուցանիշից): Մարզի սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառությունը 2011թ. կազմել է 12.1 մլրդ դրամ, որը 2007թ. համեմատությամբ ավելացել է 39.1%-ով, իսկ մատուցված վճարովի ծառայությունների ծավալը՝ կրկնակի անգամ և կազմել է 9.3 մլրդ դրամ:

2007-2011թթ. ընթացքում, ի հաշիվ մեր բացված աշխատատեղերի, աստիճանաբար նվազել է գործազրկության մակարդակը՝ 15.3%-ից հասնելով 8.7%-ի:

Նույն ժամանակահատվածում քաղաքաշինության ոլորտում կատարվել են ավելի քան 15,6 մլրդ դրամի շինարարական և նորոգման աշխատանքներ, որից ավելի քան 4,8 մլրդ դրամն ուղղվել է կրթական և նախադպրոցական, 1,185 մլրդ դրամը՝ առողջապահական օբյեկտների կառուցմանն ու հիմնանորոգմանը, 1,89 մլրդ դրամը՝ մշակութային, ավելի քան 133 մլրդ դրամը՝ մարզական օբյեկտների նորոգմանը:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում՝ ֆինանսավորման տարբեր աղբյուրներով իրականացվել են ավելի քան 26,2

մլրդ դրամի համաշինարարական աշխատանքներ: Տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման համար կատարվել են ավելի քան 21,6 մլրդ դրամի, իսկ պահպանման ու շահագործման համար՝ ավելի քան 4,6 մլրդ դրամի աշխատանքներ:

Մարզի համայնքներում շարունակական լուծում են ստացել համայնքների կողմից առաջնահերթ համարված հիմնախնդիրները: 1,259 մլրդ դրամ է ներդրվել համայնքային կենտրոնների կառուցման և վարչական շենքերի նորոգման համար: Աշխատանքներ են տարվել ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման ցանցերի կառուցմանն ու հիմնանորոգմանն ուղղված, որի համար 2007-2011թթ. ներդրվել է ավելի քան 3,6 մլրդ դրամ:

Մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքը վերջին չորս տարում կազմել է շուրջ 233.0 մլրդ դրամ:

2011թ. ընթացքում մարզում գյուղատնտեսությամբ զբաղվել են 18026 գյուղացիական և ֆերմերային տնտեսություն, գյուղատնտեսական մթերքների վերամշակման և արտադրության 58 գյուղատնտեսական կազմակերպություն:

Մարզի բնակավայրերի գազի-

ֆիկացման նպատակով կառուցվել են մեր գազատար ցանցեր, կատարվել ավելի քան 748 մլն դրամի շինմոնտաժային աշխատանքներ, որի շնորհիվ միայն բնակչության շրջանում բաժանորդների թիվն աճել է 7814-ով կամ 50,3%-ով:

Ավելի քան 453 մլն դրամի աշխատանք է կատարվել բնակարանային ֆոնդի կառուցմանն ու հիմնանորոգմանն ուղղված: Շահագործման է հանձնվել սոցիալական մեկ տուն, որը հնարավորություն է տվել լուծել սոցիալապես անապահով կամ անօթեան 40 ընտանիքի բնակարանային խնդիր, սկսվել է երկրորդ սոցիալական տան շինարարությունը:

Ավելի քան 3,32 մլրդ դրամ ուղղվել է բնակավայրերի բարեկարգվածության աստիճանի բարձրացմանը, բնակչության համար հանգստի գոտիների ստեղծմանը, մանկական խաղահրապարակների կառուցմանը և սոցիալական մշակութային այլ խնդիրների լուծմանը:

Կառավարության կողմից մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները 2008 թվականից մեր վերաբերմունքի արժանացան: 2009թ. հաստատվեց Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որում ներառված խնդիրները նույնպես սկսեցին լուծում

ստանալ: Նոր թափ հաղորդվեց զբոսաշրջության զարգացմանը: 2010թ. շահագործման հանձնվեց Տաթևի ճուղանուղին, որը մարզի տնտեսության զարգացման համար մեր ազդակ հանդիսացավ:

Գործարկվեցին նաև մի շարք ձեռնարկություններ, մասնավորապես՝ Հանքասարի հանքավայրը շահագործող «ԼԵՆ-ԷՔՍ» ՍՊԸ-ն, Շամբի պահածոների և հանքային ջրերի գործարանները, «Վամաքս» ՍՊԸ-ն և այլն:

Հինգ տարվա ընթացքում 500 մլն դրամով աճել է մարզի առողջապահական հաստատությունների՝ պետական պատվերի հաստատված գլոբալ բյուջեն և 2011թ.կազմել է 1,672 մլրդ դրամ:

Դպրոցների գործունեության բարելավման, ժամանակակից կրթական չափորոշիչների կիրառման արդյունքում մարզի դպրոցները հետ չեն մնում հանրապետության առաջատար և տեխնիկապես հագեցված հաստատություններից:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով անցած հինգ տարվա ընթացքում տեղական և միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսավորման այլ աղբյուրների միջոցով իրականացվել են ավելի քան 64,2 մլրդ դրամի ներդրումային, հումանիտար և վարկային ծրագրեր՝ ընդգրկելով գրեթե բոլոր համայնքները:

Մարզում գերակա հիմնախնդիրներից է աշխատատեղերի ստեղծման և գործազրկության մակարդակի իջեցման հարցը, որն էլ առաջիկա հինգ տարում կմնա Հանրապետական կուսակցության քաղաքական օրակարգում:

Այս թվարկումները կարելի է շարունակել: Սակայն մշվածն էլ բավական է՝ հանդգնելու համար, որ առաջընթացն ու ձեռքբերումներն ակնհայտ են:

Հավատում են՝ մտօրհայան գաղափարախոսության ջահակիր սյունեցին, ով 2007 և 2008 թվականներին վստահության ծանրակշիռ քվե տվեց Հանրապետականին ու նրա առաջնորդին, հավատում է մեզ, մեր հաղթանակներին, համոզված է, որ երկրի վերջին տարիների զարգացման քաղաքական ուղին պետք է պահպանվի ու շարունակվի, և հավատում է, որ 21-րդ դարը մերն է լինելու:

Ուրեմն՝ հավատանք և հանուն այդ հավատքի ու հանուն վաղվա օրվա մեր վստահության քվե՛ն վերստին տանք Հանրապետականին: Վստահ եղեք՝ մենք միասին կառուցելու ենք մեր երազած Հայաստանը: Հավատանք, որ փոխենք:

ՔԱՐՈՋԱՐՇԱՎ



2012թ. ապրիլի 18: ՕԵԿ հանրահավաքը Կապանում:

«Վստահեք, որ կառուցենք օրենքի երկիր»

Խորհրդարանական գործունեության ընթացքում «Օրինաց երկիրը» դարձավ շուրջ 200 օրինագծի հեղինակ, որոնց հիմնական մասը կրել է բարեփոխումային բնույթ. ապրիլի 18-ին Նախընտրական քարոզչության շրջանակում Կապանի մշակույթի կենտրոնի առջև ընտրողների հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարեց «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը:



«Օրինաց երկիր» կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանը:

«Օրինաց երկիր» այսօրվան կազմակերպությունը հավուր պատշաճ էր պատ- ր ա ս տ վ է ւ միջոցառմանը. ազգային տարագ հագած մանուկներն աղուհացով դիմավորեցին կուսակցության ղեկավարին, ով, քիչ հետո պարզվեց, օրվա հիմնական բանախոսն էր եւ ներկայացրեց կուսակցության օրինաստեղծ գործունեությունը: Արձանագրելով, որ ՕԵԿ-ի հեղինակած օրենքներով ծննդօգնությունը դարձել է անվճար, ընդգծեց որ կուսակցությունը ցանկանում է հասնել այն բանին, որ պետությունը պարտավորվի երրորդ երեխայի ծնվելու դեպքում ընտանիքին հատկացնել 500 հազար, չորրորդ երեխայի դեպքում՝ 600 հազար, հինգերորդ երեխայի դեպքում՝ 1 մլն դրամ: Այս համատեքստում բերվեց մի մտահոգիչ թվական տվյալ: Հայաստանում մինչև 35 տարեկան ընդամենը 30 ընտանիք կա, որում մեծանուն է հինգ զավակ:



Կապանցիները դիմավորում են Արթուր Բաղդասարյանին:

Բանախոսն անդրադարձավ ԽՍՀՄ խնայբանկերում քաղաքացիների խնայողական ավանդների փոխհատուցման խնդրին, նշելով, որ ՕԵԿ-ի հեղինակած օրենքի ուժով իրենց ավանդները փոխհատուցման տեսքով ստացան Հայրենական մեծ պատերազմի վետերանները: Սակայն, տակավին մոտ 250 հազար մարդ սպասում է ավանդների վերադարձմանը, ինչն ՕԵԿ-ը դարձնելու է իր քաղաքական պայքարի ուղղություններից մեկը եւ որպես արտառոց փաստ արձանագրեց այն, որ պետական բուհերում ուսման վարձավճարներն ավելի բարձր են, քան մասնավոր բուհերում:

Ա.Բաղդասարյանը ելույթի ընթացքում ներկայացրեց «Օրինաց երկիր» կուսակցության, որ ընտրարշավի կարգախոս է ընտրել «Վստահեք, որ կառուցենք օրենքի երկիր» կարգախոսը, նախընտրական ծրագրի այլ դրույթներ (ռազմավարական նշանակության արդյունաբերական ձեռնարկություններին վերադարձնել պետական կարգավիճակը, նախադպրոցական կրթությունն անբողջապես դարձնել անվճար, հարկային եւ մաքսային

քաղաքականությունը նպատակաուղղել գործարարության խթանմանը, լուրջ փոփոխություններ մտցնել բարձրագույն կրթության պետատվերի համակարգում՝ իր բնորոշմամբ ընտանիքին ազատել ուսման վարձ կոչվող լծից եւ այլն): Դրանց մեջ հրապուրիչ շատ բան կար, բայց որքանով են իրականացվել մեր օրերում: Ելույթի ավարտին բանախոսը ներկայացրեց ՕԵԿ-ի համամասնական ցուցակում ընդգրկված երկու այսուներջներին՝ Դավիթ Կարապետյանին (ցուցակում 10-րդ հորիզոնականն է զբաղեցնում) եւ Գարիկ Միրզոյանին (22-րդ տեղ): Վերջիններս նկատառումներ հայտնեցին եւ ներկայեցին կոչ արեցին քվեարկել «Օրինաց երկիր» կուսակցության օգտին: Այս ամենով հանդերձ, «Այունյաց երկիրը» շարունակում է հետեւել քարոզարշավի ընթացքին (մարզկենտրոնում ընտրողների հետ արդեն հանդիպել են Հայաստանի հանրապետական կուսակցության, Հայ Յեղափոխական Դաշնակցության, «ժառանգության», «Օրինաց երկիր», Հայկոմկուսի ներկայացուցիչները):

Եվ մեզ մնում է փաստել, որ Այունիքի մարզի հիմնախնդիրները (իսկ այդպիսիք լիովին բավարարում են՝ սկսած բնապահպանությունից, վերջացած բնակչության զբաղվածության խնդրով,) հանդիպումների ժամանակ այդպես էլ չեն բարձրաձայնվում ըստ պատշաճի:

ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ. «Ես ձեզ խնդրում եմ քվեարկելուց առաջ գոնե մի քիչ մտածեք...»



2012թ. ապրիլի 20: Հայկոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանը:

Ապրիլի 20-ին քարոզարշավի շրջանակներում Կապան էր այցելել Հայաստանի կոմունիստական կուսակցության ակտիվը՝ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանի գլխավորությամբ:

Պի զարգացման ու գյուղմթերքների իրացման խնդիրները: «Նրանք ասում են՝ գալիս ենք՝ օգնենք ձեզ, բայց այս ամբողջ ընթացքում ոչինչ չարեցին երկրի վիճակի բարելավման համար: Այժմ էլ ասում են՝ հավատացե՛ք, խոստումներ են տալիս, ես ձեզ խնդրում եմ՝ քվեարկելուց առաջ գոնե մի քիչ մտածեք ու ծանրութեթե արեք: Բնակարաններ են խոստանում, մարդկանց են իրենց հետ բերում հանրահավաքների, որ ցույց տան, թե շատ համակիրներ ունեն: Վերջին 22 տարվա ընթացքում իրենց խոստումներից ոչ մեկը չեն պահել, ոչինչ չեն արել մեր երկրի համար, մեր ժողովրդի համար: Մայիսի 6-ին նորից ուզում են հինգ տարով խորհրդարան մտնել, որ էլի ոչինչ չանեն, նորից երկիրը թալանեն եւ իրենց ունեցվածքը կրկնապատկեն», - իր ելույթում նշեց Ռ.Թովմասյանը: ՀԿԿ առաջնորդը կարեւորեց նաեւ Ազգային ժողովի դերի բարձրացումը մեր երկրում, ինչն ընդգրկված է ՀԿԿ-ի նախընտրական ծրագրում, եւ Ռուսաստանի Դաշնության դերը մեր երկրի զարգացման գործում:

Հանրահավաքը պետք է տեղի ունենար ժամը 18.00-ին, սակայն սկսվեց փոքր-ինչ ուշացումով: ՀԿԿ-ի քարոզախմբի անդամները պարզաբանեցին, որ Կապան գալու ճանապարհին նրանք մոտ 40 րոպե կանգ են առել Վայոց ձորի մարզում, որտեղ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հանրահավաքի պատճառով փակվել էր ճանապարհը: Հավաքը տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնի բակում, որն այս անգամ ես մարդաշատ չէր: Հավաքին ներկա էր կուսակցության Կապանի ակտիվը՝ մեծամասամբ տարեց մարդիկ: Ռուբեն Թովմասյանը ներկայացրեց կուսակցության ծրագիրը եւ անդրադարձավ շուկայական թանկացումներին ինչպես տեղական, այնպես էլ ներկրված ապրանքների դեպքում: «Իսկ դրանցից ստացած գերշահույթը գնում է ղեկավարների, իշխանությունների եւ նրանց սերունդների գրպանները», - ասաց Ռ.Թովմասյանը: Նա իր խոսքում կարեւորեց գյու-

Ելույթի կեսից հրապարակում հավաքվածների մեծ մասը ցրվեց տեղացող անձրեւի պատճառով: ԱՄԿԱՆԻ ՆԱԿԱՍԱՐԳՅԱՆ



2012թ. ապրիլի 20: Կոմկուսի հանրահավաքը Կապանում:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՄԲԻՈՆ

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. «Այս ամենից 37 թվականի հոյր է փչում»

Հարցազրույց Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ,
N38 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով
պատգամավորության թեկնածու Դավիթ Մաթևոսյանի հետ



Պարոն Մաթևոսյան, դուք ընդգրկված եք Հայ ազգային կոնգրեսի համամասնական ցուցակում՝ զբաղեցնելով 16-րդ հորիզոնականը: Նաեւ համաձայնել եք առաջադրվել մեծամասնական ընտրակարգով, այն էլ N38 ընտրատարածքում, ինչո՞ւ առաջադրվեցիք հենց այդ ընտրատարածքում՝ աչքի առաջ ունենալով դրանում տարիներ ի վեր ստեղծված իրավիճակը:

– Ես ի սկզբանե առաջարկել եմ, որ ԱԺ ընտրությունների բոլոր 41 մեծամասնական ընտրատարածքներում Հայ ազգային կոնգրեսն առաջադրի պատգամավորության թեկնածու՝ իհարկե, քաղաքական համոզմունքով դեմ լինելով մեծամասնական ընտրակարգին: Նպատակն իշխանությունների դեմ պայքարն ավելի համակարգված տանելն է, քանզի կոնգրեսը որդեգրել է մի սկզբունք. չպայքարել՝ նշանակում է պարտված լինել: Ասեմ, որ N38 ընտրատարածքը ներառում է նաեւ իմ ծննդավայրը, բացի այդ՝ ես Կապանում գործունեություն եմ ծավալել, երբ հիմնադրվեց մարզպետարանը, եւ այս տարածաշրջանը շատ հոգեհարազատ է ինձ: Այս ամենը հաշվի առնելով՝ որոշեցի առաջադրվել հենց N38 ընտրատարածքում:

– Քարոզարշավի երեք շաբաթն արդեն հետեւում է մնացել: Ինչպե՞ս եք զննահատում դրա ընթացքն ընտրատարածքում եւ առհասարակ քարոզարշավի անցած օրերը:

– Ենթադրում էի, որ նախկին Մեղրու եւ Կապանի շրջաններում վախ եւ անտարբերության մթնոլորտ պիտի տիրի, անտարբերությունը հասկանալ կարելի էր, բայց այսչափ վախ չէի պատկերացնում,

եւ ինձ համար շատ զարմանալի է, որ բազմաթիվ ծանոթ, հարազատ մարդիկ, ովքեր գաղափարապես կողմնորոշված են, ծածուկ են գալիս, հայտնում իրենց դիրքորոշման մասին, բայց այդ ամենը բացահայտ չեն կարող ցույց տալ: Ես ուղղակի ցնցված եմ, որովհետեւ Հայաստանում, մասնավորապես Սյունիքում, ժողովուրդը վախեցնում է իշխանությունից: Հետեւաբար, այս իշխանությունը նաեւ օտար է այս ժողովրդին:

– Խմբագրությունը մի այսպիսի սկզբունք է որդեգրել. Սյունիք այցելող բոլոր պատգամավորության թեկնածուներին եւ քաղաքական ուժերին դիմել հարցով, որո՞նք են Սյունիքի մարզի կամ տվյալ ընտրատարածքի երկու-երեք գլխավոր խնդիրները: Կուզե՞նայի իմանալ նաեւ ձեր կարծիքը:

– Հայաստանի ամեն մի տարածաշրջանում գլխավոր խնդիրը համարում եմ մարդկանց ազատությունը, հնարավորությունների հավասարությունը եւ արժանավայել աշխատանքը, երեխաների համար՝ կրթության հնարավորությունը: Ես եղել եմ Սյունիքի համարյա բոլոր գյուղերում եւ ապշել եմ տեսնելով, թե գյուղերը որքան արագ են դատարկվում: Մի թվական տվյալ բերեմ. 2000 թվականին մարզի դպրոցահասակ երեխաների թիվը 27 հազար էր, հիմա՝ 17 հազար 400, եւ դա այն դեպքում, որ հիմա կրթությունը 12-ամյա է: Գրողականների թիվը կիսով չափ կրճատվել է, եւ այս տխուր երեւույթը երկրաչափական պրոգրեսիայով շարունակվում է:

– Հասցրե՞լ եք լինել N38 ընտրատարածքն ընդգրկող համայնքներում:

– Մեղրու համայնքներում եղել եմ, շարունակվում եմ լինել Կապանի

տարածաշրջանի համայնքներում: Բազմամարդ հավաքներ չեն լինում, թեկուզ մի մարդու էլ եմ հանդիպում, տալիս եմ քարոզչական նյութեր եւ պարզապես հորդորում եմ քվեարկության օրն առաջնորդել սրտի թելադրանքով ու խղճի մտքը եւ չկորցնել մարդկային արժանապատվությունը:

– 2008-ի նախագահական ընտրությունների համեմատ, կարծեք, Հայ ազգային կոնգրեսը պասիվացել է մի քիչ, դա նկատելի է նաեւ մարզի բոլոր տարածաշրջաններում: Ինչո՞ւ եք դա բացատրում:

– 2008թ. մեր գիտակցության մեջ երկու իրադարձությամբ է զուգորդվում՝ նախագահական ընտրություն եւ մարտիմեկյան ընդհարումներ: Նախագահական ընտրությունից շատ առաջ էլ ՀԱԿ-ը դժվարությամբ էր իր համար ուղի հարթում: Ուզում եմ մի կոնկրետ ամսաթիվ նշել. 2007թ. հոկտեմբերի 23-ին մեզ բռնությամբ տարան ոստիկանություն, Հայ ազգային կոնգրեսը կամ նրա մաս կազմող ուժերն ու գործիչները ենթարկվում էին համընդհանուր հետապնդման: Տասը զոհ ունեցանք Մարտի 1-ին, 100-ից ավելի ակտիվիստներ հայտնվեցին բանտում, ինքս մտո մեկուկես տարի եղել եմ անազատության մեջ, բազմաթիվ մարդիկ ազատվել են աշխատանքից: Այսիմքն՝ այս դեպքում հասարակությունը կամ մարդիկ առաջնորդվում են բնագրով: Հայ ազգային կոնգրեսի կողքին կանգնելը, նրա հետ ճանապարհ անցնելը (խոսքս բացահայտ, հրապարակալի գործունեության մասին է) շատ վտանգավոր էր եւ արյունոտ ռեժիմի կողմից պատժի էր ենթարկվում: Իրականում Հայ ազգային կոնգրեսն այն ուժն է, որ այս պայմաններում

ԴԱՎԻԹ ՂԵՎՈՆԴԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1960թ. Սյունիքի մարզի (Մեղրու շրջան) Կարճեան գյուղում: Մասնագիտությամբ գյուղատնտես է:
Աշխատել է Ազարակի հանքաշինական վարչությունում, Մեղրու ոռոգման համակարգում, Մեղրու ՀԼԿԵՄ շրջկոմում՝ որպես հրահանգիչ, 25 փորեկանում՝ նշանակվել է Կարճեանի պեղական փորելության փորել: 1990թ.՝ դեռես խորհրդային իշխանության պայմաններում եւ Հայաստանում հողի սեփականաշնորհումից մեկ փարի առաջ, սեփական նախաձեռնությամբ Կարճեանում, ըստ էության, իրականացրել է հողի սեփականաշնորհում:
1991թ. նշանակվել է Մեղրու ՆԳ բաժնի պետ՝ շրջանի պաշտպանությունը համակարգելու եւ փորել բանակի կազմավորման աշխատանքներին աջակցելու լիազորություններով: 1995թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պարզամարզ: 1996-1998թթ. աշխատել է Սյունիքի փոխմարզպետ: 1999-2000թթ. եղել է «Հայան-փառի» գլխավոր փորել:
2008թ. նախագահական ընտրություններում եղել է Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրական շտաբի անդամ: Նախկին քաղաքապետը եւ 2008թ. մարտի 1-ին ձերբակալվել է, շինծու մեղադրանքով դատապարտվել 3 փարի ազատազրկման, ազատ է արձակվել 2009թ. հունիսի 22-ին:
«Հայ ազգային կոնգրես» դաշինքի կենտրոնական շտաբի անդամ է: Անկուսակցական է:
Ամուսնացած է, ունի 3 երեխա:

առնամբ մնաց կանգուն: Ինչ վերաբերում է ՀԱԿ-ից դուրս եկածներին, ապա ես հարգում եմ բոլոր նրանց, ում հետ միասին ճանապարհ ենք անցել եւ այլ բան չուներ ավելացնելու ասվածին:

– ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն եւ ԲՀԿ-ն ընտրությունները միասին վերահսկելու մասին համաձայնագիր են ստորագրել: Գործնական ի՞նչ դրսևորումներ կունենա այդ համաձայնագիրը Սյունիքում:

– ՀՅԴ-ն եւ ԲՀԿ-ն ընտրական հանձնաժողովներում՝ ընտրատարածքային, թե տեղամասային, ունեն տեղեր: Ես, օրինակ, եղա Նորաշենիկի ենթաշրջանի գյուղերում եւ համոզվեցի, որ Դաշնակցություն կուսակցությունն այնտեղ բավականին արմատավորված է: Կարծում եմ, որ ընտրությունները վերահսկելու միասնական շտաբ ստեղծելով երկու գործնական խնդիր կարելի է լուծել, եւ կառաջարկեմ գնալ այդ ճանապարհով: Նախ՝ մայրենք՝ տեսնենք, թե մեր ուժերն ինչպես են տեղաբաշխված, ձեւական վերահսկողություն չփորձել իրականացնել: Ընտրությունների ընթացքում, քվեարկության օրը հայտնաբերած յուրաքանչյուր խախտում արժանագրեք համատեղ: Որովհետեւ ընտրական հանձնաժողովներում սովորաբար ձգտում են ընտրախախտումները չգրանցել, բայց երեք ուժի համատեղ վերահսկողությունը, կարծում եմ, արդյունք կտա: Եթե Հայաստանում այս անգամ էլ չգրանցվեն ազատ եւ արդար ընտրություններ, հանրապետության կործանումը կշարունակվի ավելի մեծ արագությամբ:

– Որքանով տեղյակ եք, ՀՀ գլխավոր դատախազին հանդրորում եք ներկայացրել: Ի՞նչի մասին է հանդրորումը եւ ի՞նչ ընթացք է ստացել:

– Ես ուղղակի քաղաքական քայլ եմ կատարել, ներկայացրել կոնկրետ իրավիճակ, նշել կոնկրետ մարդկանց անուններ, եւ նրա սրբազան պարտքն էր առաջնորդվել Քրեական օրենսգրքի 149 հոդվածով ու քրեական հետապնդում իրականացնել կամ հատուկ քննչական ծառայության միջոցով իրականացնել համապատասխան քննություն: Այն, ինչ ներկայացված է իմ դիմումի մեջ, թե Ազարակում ստեղծվել է վախի մթնոլորտ, ինչը կարող է քաղաքացիների ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտ լինել, միանգամայն համապատասխանում է իրականությանը: Ծշմարիտն ասած, մի փոքր տարակուսում էի՝ դիմել՝ դատախազին, թե՛ ոչ: Բայց դանակը ոսկորին հասավ այն բանից հետո, երբ Ազարակ քաղաքում իմ նախընտրական հանդիպումից հետո հորաքրոջս որդուն մեղադրանք ներկայացրին այն բանի համար, որ նրա կինն ու զավակը մասնակցել են իմ հանդիպմանը: Այս ամենից, կենտրոն, 37 թվականի հոտ է փչում: Եթե ունանք թվում է, թե բոլորն ահաբեկված են, ես այս քայլը կատարել եմ, համոզվելու, որ ոչ մեկից չեմ վախեցնում, ոչ գլխավոր դատախազից, ոչ մի երկրորդական քաղաքացիներից, ոչ մարզպետից, ոչ որեւէ մեկից, ոչ էլ Գալուստ Սահակյանի՝ Ազարակի կոմբինատում մատակարարման բաժնի պետ քրոջորդուց, ով, ցավով, պատմարժան Արամ Սաչախոյան անուն-ազգանունն է կրում, ով այնտեղ փորձում է «բերդի» դեր ստանձնել: Ունեն դատախազության թե՛ գծի համարը, եւ ինքս եմ պարզելու, թե ինչ ընթացք ունեցավ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված իմ դիմումը:

– Ո՞րն է պատգամավորի ձեր իդեալը, ինչպիսի՞ն պետք է լինի պատգամավորը:

– Ասեմ, որ պատգամավոր լինելը շարունակությունը՝ էջ 6

ԿԱՄՈՍ ԱՄՖՐԱԳՅԱՆ. «Իշխանությունների ճնշումները հակառակ արդյունքը կտան»

Հարցազրույց Հայ ազգային կոնգրեսի Սիսիանի նախընտրական շտաբի ղեկավար Կամոս Ամֆրագյանի հետ

ՔԱՐՈՋԱՐԿԱԿ

– Պարոն Ամֆրագյան, թե ինչ հիմնական գործառնություններ են իրականացնում նախընտրական շտաբները, մեզ համար պարզ է, սակայն ուզում ենք խոսել ձեր կատարած աշխատանքներից, ի՞նչ եք կատարել մինչ օրս քարոզարշավի ընթացքում:

– Առաջին իսկ օրվանից ակտիվ աշխատանք ենք տանում, հանդիպումներ ենք ունենում բնակիչների հետ, նրանց նախապատրաստում ՅԱԿ-ի թեկնածուների հետ համադրական, մարդկանց պարզաբանում ՅԱԿ-ի առաքելությունը, նախընտրական օրագրի դրույթները: Մեր ուշադրության կենտրոնում են տարածաշրջանի գյուղերը, որտեղ տիրող իրավիճակը շատ ավելի վատ է և մտահոգիչ, քան մենք կարծում էինք մինչ այժմ: Գյուղեր կան, որտեղ տպավորություն են ստանում, թե հետպատերազմյան շրջան է, որտեղ միայն ծերեր են, իսկ երիտասարդները թողել-հեռացել են գյուղից:

– Աեզանում կարծիք կա, որ Հայ ազգային կոնգրեսի համակիրները, 2007-2008 թվականների համեմատ, պատշաճ ակտիվություն չեն դրսևորում ներկա ընտրական գործընթացներում, իսկապե՞ս այդպես է, թե՞ դա միայն թվացյալ է:

– Նախ՝ 2008-ից մինչ օրս բնակչության թիվը զգալիորեն նվազել է տեղի ունեցած խոշոր չափերի հասնող արտագաղթի պատճառով: Երկրից հեռացողների մեծ մասը ՅԱԿ-ի համակիրներն էին, ովքեր դժգոհ էին իշխանությունների վարած քաղաքականությունից, ովքեր այստեղ չունեին աշխատանք և ապրուստի միջոց: Սա հիմնական գործոններից մեկն է, ինչը նպաստել է ՅԱԿ-ի շարքերի նուսրացմանը: Միաժամանակ՝ երբեք չեն դադարել իշխանության ներկայացուցիչների կողմից ճնշումները մեր ակտիվիստների վրա, ինչը նույնպես որոշակի ազդեցություն է ունեցել:

– Իսկ ինչպե՞ս են դրսևորվում այդ ճնշումները:

– Մարդիկ վախենում են մեզ հետ հանդիպումների գալ, մասնավոր՝ գյուղական փոքր համայնքներում: Հանդիպումների ժամանակ համայնքապետերի, որեւէ իշխանավորի ներկայությունն արդեն իսկ զգուշացնում էր, որտեղ և որտեղ մարդկանց: Մասնավոր դր այս ընտրատարածքի համայնքապետերը խոստացել են ծայրերի 80%-ը տալ Հայաստանի հանրապետական կուսակցությանը և նույնիսկ ինչ-որ ցուցակներ են ներկայացնում շրջանային շտաբ:

– Իսկ Ձեր ղեկավարած շտաբի վրա ճնշման դեպքեր եղե՞լ են:

– Մինչ այժմ մեր շտաբի վրա ճնշումներ չեն եղել, մենք էլ մեր հերթին ամեն ինչ անում ենք օրենքի սահմաններում:



Կամոս Ամֆրագյան

– Ի՞նչ քայլեր եք ձեռնարկում մայիսի 6-ի ընտրության ընթացքում ընտրակեղծիքները բացառելու համար:

– Այսօր արդեն ունենք հստակ օրագիր: Մայիսի 6-ին յուրաքանչյուր տեղամասում ունենալու ենք առնվազն երկու վստահված անձ, բացի այդ, Սիսիանում եւս, ինչպես ամբողջ հանրապետությունում, ստեղծվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հայ ազգային կոնգրես» դաշինքի և Հայ հեղափոխական դաշնակցության համատեղ շտաբը, որի նպատակն է միացյալ ուժերով ընտրակեղծիքների դեմ պայքարելը: Կարծում են՝ այդ համագործակցությունը կտա դրական արդյունք:

– Որպես Հայ ազգային կոնգրեսի Սիսիանի նախընտրական շտաբի ղեկավար՝ կարո՞ղ եք որեւէ թիվ կամ տոկոս ասել, որ ակնկալում եք ստանալ ընտրության արդյունքում, խոսքս վերաբերում է համամասնական ընտրակարգով ընտրությանը:

– Հիմա դժվարանում են որեւէ բան ասել, սակայն ընտրողների հետ հանդիպումների ժամանակ տեսնում ենք ակնհայտ դժգոհություն իշխող կուսակցությունից, և այդ մարդիկ որպես այլընտրանք ՅԱԿ-ի օգտին կքվեարկեն:

– Թիվ 37 ընտրատարածքում Հայ ազգային կոնգրեսի մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուն Վարդապետ Վարդապարյանն է, նա նաև ընդգրկված է ՅԱԿ-ի համամասնական ցուցակի 43-րդ տեղում: Ի՞նչ եք կարծում, Սիսիանում վստահության լուրջ քվե ստանալու շանս ունի՞ Ձեր թեկնածուն, մասնավոր այն պարագայում, երբ տվյալ ընտրատարածքում առաջադրված թեկնածուներից մեկը ծննդով սիսիանցի թաթուլ Հակոբյանն է, ով որոշակի հարթանք է վայելում Սիսիանում:

– Ցավիք, այսօր մարդիկ քվեարկելիս առաջնորդվում են նախաառաջ տեղային մտածողությանը, յուրաքանչյուր սիսիանցի

նախապատվությունը տալիս է իր համաքաղաքացուն, իսկ գործիչները՝ իրենց, ու այս հանգամանքը Վարդապետ Վարդապարյանի օգտին չէ, և Սիսիանում քվեների մի մասը նա հենց այդ պատճառով չի ստանում:

– Մի հարց եւս, որ նաև անձնական բնույթի է: Դուք Հայ ազգային կոնգրեսի անդամ եք, Սիսիանի նախընտրական շտաբի ղեկավար, իսկ ձեր թրոջ ամուսինը՝ Աղասի Հակոբյանյանը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ է և Սիսիանի նախընտրական շտաբի ղեկավարը, արդյո՞ք բարեկամությունը չի խանգարում նախընտրական պայքարի առավել անկաշխանը ընթացքին:

– Բարեկամությունը՝ բարեկամություն, իսկ մեր քաղաքական հայացքներն ամենեւին էլ պարտադիր չէ, որ համընկնեն: Ինքս ՅԱԿ-ի հիմնադրման առաջին իսկ օրերից սկսած անդամակցել եմ այդ կուսակցությանը, 13 տարի եղել եմ ՅԱԿ-ի Սիսիանի խորհրդի նախագահ: Մինչդեռ ԲՀԿ-ն հետո քաղաքական ասպարեզ իջավ: Ես ունեմ հստակ քաղաքական կողմնորոշում, ինչը ոչ մի պարագայում չեն փոխի: Նույնն էլ՝ Աղասի Հակոբյանյանը:

– Որպես քաղաքական անցուդարձի ծանոթ մարդ, ի՞նչ եք կարծում, եւ համամասնական, եւ մեծամասնական ընտրակարգերով Սիսիանում ովքե՞ր են այս պահի դրությամբ առաջատարները:

– Կարող եմ ասել, որ իշխանությունների կողմից այսօր ճնշումը ժողովրդի վրա մեծ է, սակայն հակված եմ կարծել, որ դա ոչ միայն ակնկալվող արդյունքը չի տա, այլև հակադարձ ազդեցություն կունենա: Իսկ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներից Սիսիանում առաջատար կարելի է համարել անկուսակցական Թաթուլ Հակոբյանին՝ հաշվի առնելով տեղային հայրենասիրության գործոնը:

ԱՐԱՎԵՒ ԵՎ ԿԱՍՏՐՈՒՄ

ԴՎՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ. «Այս ամենից 37 թվականի հոյք է փչում»

Հարցազրույց Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ, N38 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու Դավիթ Մաթևոսյանի հետ

ՊԱՏՎԱԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՄԲՈՆ

Սկիզբը՝ էջ 5

Իմ կյանքի նպատակը չէ, ես մի անգամ պատգամավոր եմ եղել, սա պայքարի մի ձև է: 1995-1999թթ.՝ իմ պատգամավոր եղած ժամանակ, յուրաքանչյուր օրինագիծ քննարկվում էր, և տեղի էր ունենում քվեարկություն՝ անկախ այն բանից, թե ով կար դահլիճում, ով չկար: Բացարձակ մեծամասնությունը միշտ ներկա էր միստերին և ակտիվորեն քվեարկում էր: Հիշում եմ՝ Ազգային ժողովն ու կառավարությունն ուղղակի մրցակցության մեջ էին, նույնիսկ նույն թիմի անդամ լինելով: Այդպիսի բան չկար, որ սպասում էին հանրապետության նախագահի ցուցումին, թե ինչ պիտի ասի: Ազգային ժողովում կար պետական մտածողություն, հիմա է, որ Ազգային ժողովը դարձել է կառավարության կցորդ կամ խամաճիկ՝ հանրապետության նախագահի ձեռքին: Ազգային ժողովը կարելու էր մարմին է, և վստահ եմ, որ Հայ ազգային կոնգրեսի ծանրակշիռ ներկայությունը դեպքում, անկախ այն բանից, գործող իշխանությունները կցանկանան, թե ոչ, ԱԺ-ն իր հեղինակությունն ու վարկը կվերականգնի:

– Համապետական ամեն մի ընտրության դեպքում ընտրացուցակները լինում են հասարակության քննարկումների կիզակետում, մարդկանց անուններ են ընդգրկված լինում ընտրացուցակում, ովքեր տարիներ ի վեր բացակայում են հանրապետությունից կամ հրաժեշտ են տվել երկրային կյանքին:

– Ընտրական ցուցակների խնդիրը հետեւյալն է. ցուցակներում ընդգրկված են լինում նաև հանրապետության այն քաղաքացիները, ովքեր տարիներ ի վեր, գուցե տասնամյակից ավելի, արտերկրում են բնակվում: Եվ դա զանազան հաշվարկներով կազմում է 500-700 հազար մարդ: Ցուցակներում սպորդ էլ են նաև մահացածների անուններ, ինչը երկրորդական բան է համարում: Չենք ուզում դրա վրա ուշադրություն դարձնել: Խնդիրը Հայաստանից տեսական ժամանակով բացակայողներին միտումնավոր, օրենքը շրջանցելով, ցուցակների մեջ մտցնելն է: Ընտրական օրենսգրքը թույլ է տալիս, որ պահպանվի ընտրական ցուցակում ընդգրկվելու և

քվեարկելու հնարավորությունը, բայց խոսքը վերաբերում է լրացուցիչ ցուցակներին: ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ ՀՀ տարածքից վեց ամիս ավելի ժամկետով բնակության մեկնող կամ 6 ամսից ավելի ժամկետով բնակվող ՀՀ քաղաքացին պետք է հանվի Հայաստանի Հանրապետության մշտական բնակության վայրի հաշվառումից՝ թողնելով բնակիչների ռեգիստրում: Կվերադառնա, նորից թող վերցնեն հաշվառման: Որպեսզի ավելի պատկերավոր լինի, ասեմ, որ նախորդ նախագահական ընտրություններին մասնակցել է 1 մլն 650 հազար մարդ, ըստ էության ավելի շատ, քան հանրապետության ընտրողների թիվն է: Ստացվում է՝ տարիներ շարունակ հանրապետությունից դուրս բնակվող քաղաքացիներից շարունակում են հաշվառված պահել նախկին հիմնական բնակության հասցեում, և հետևաբար՝ ընտրողների հիմնական ցուցակում, ինչը սողանցքներ է թողնում ընտրակեղծիքների համար:

– Ի՞նչ կարծիք եք ձեր մրցակիցների մասին:

– Ինձ մրցակից համարում եմ իշխող վարչակարգին, որն այս ընտրատարածքում սատարում է Վահե Հակոբյանին, ում չեն ճանաչում, թեև Ազգային ժողովի պատգամավորներից տարբերվում է արանով, որ իրեն չի արատավորել: Չեն համարում, որ քաղաքական գործիչ է: Նրա «արժանիք» այն է, որ որդին է Մաքսիմ Հակոբյանի, ով 2004-ին «սեփականաշնորհեց» Ջանգեզուրի պղնձամուկրեցիային կոմբինատը:

– Ձեր խոսքն ընտրողներին:

– Արդեն 4-5 տարուց ավելի է, ինչ Հայ ազգային կոնգրեսը, որի մի մասնիկն են նաև ես, հետապնդվում է այս իշխանությունների կողմից, բազմաթիվ զրկանքների ու հալածանքների ենթարկվում, բայց ՅԱԿ-ի անդամները համարում են, որ պիտի պայքարել մինչև վերջ և ազատվել այս անարդար վարչակարգից: Մեր օրինակը թող վարակի լինի բոլոր նրանց համար, ովքեր մտնելու են քվեախցիկ: Խորհուրդ կտայի քվեարկելու պրոցեսում, որ ընդամենը 30 վայրկյան է տևում, արհամարհել վախն ու անտարբերությունը, առաջնորդվել այն համոզումով, որ ձեր ձայնով նպաստում եք այս երկրի իրավիճակը փոխելուն: Եվ այն փոխելու համար ընդամենը պակասում է ձեր վստահության քվեն:

Ջրույց՝ ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել՝ եռնա Հարությունյանի կողմից եմիլ Յուրիկի Հարությունյանին մահացած ճանաչելու պահանջի մասին: Բոլոր այն անձանց և կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացիի միլ Յուրիկի Հարությունյանի /ծնված 11.11.1974թ., հաշվառված՝ ք. Կապան, Մ.Հարությունյան 10/12 հասցեում/ գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք.Կապան, Երկաթուղայինների 4, հեռախոս՝ /0285/ 5-29-59:

ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄ

Արտուր Աթայանը հստակություն է մտցնում խաղաղաշարունակ

Նախընտրական ամենաբուռն օրերին անգամ մարզկենտրոնում քննարկվող գլխավոր հարցերից մեկը Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանի քաղաքական (եւ ոչ թե առողջական) վիճակն է եւ նրա շուրջ հնարավոր զարգացումները:

2012թ. մարտի 25-ին, ժամը 13-ի սահմաններում Արտուր Աթայանը սրտամկանի սուր ինֆարկտով տեղափոխվել է Կապանի հիվանդանոց: Սմբար օրբեյանի գլխավորությամբ ձեռնարկված արդյունավետ միջոցառումներից հետո նույն օրը՝ ուշ երեկոյան, հատուկ մեքենայով տեղափոխվել է Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ եւ կատարվել է սրտի պսակալին անոթների կոնկրաստային ռենտգեն-նկարահանում, ապա՝ անոթների սպեկտրալիզում, որը բարեհաջող ընթացք է ունեցել: Հիմա, ըստ բուժող բժիշկների, Արտուր Աթայանը լիովին աշխատունակ է, ինչը թույլ է տալիս վերադառնալ աշխատանքային պարականությունների կատարմանը՝ զուգահեռաբար ստանալով բուժում:

Ոչ ոք, իհարկե, երաշխավորված չէ հիվանդանալուց: Բայց մարդ արարածին բնորոշ սովորական այդ դիպվածն առաջին իսկ օրերից անսպասելի մեկնաբանությունների տեղիք տվեց: Տարածում գտան ամենափոքր քանակությամբ: Տեղի ունեցածը, փաստորեն, նոր ազդակ հանդիսացավ Կապանում իշխանության համար մղվող պայքարի ակտիվացմանը: Այդ ամենը որերորդ անգամ հաստատեց, որ իշխանության համար մղվող պայքարը (անգամ համայնքային մակարդակում) խաղի կանոններ չի սիրում, եւ իշխանության հասնելու բոլոր ձեւերն արդարացված են:

Շրջանառվող խոսակցությունների իսկությունը պարզելու համար հանդիպեցինք Արտուր Աթայանին եւ գրույց ունեցանք նրա հետ:

Արտուր Աթայան, նախ կուզենալի՞նք իմանալ Ձեր որպիսությունը:
— Ընտրականություն, արդեն լավ եմ, անաշխատունակ լինելու խնդիր չկա, վերադարձել եմ աշխատանքի եւ անցել պարտականություններիս կատարմանը:
— **Ձեր հանկարծահաս հիվանդությունն ու բացակայությունը գուցե եւ այդպիսի արձագանք չգտնեին, եթե չհանրակրթական կրթության ընտրությունների նախապատրաստման ամենաթեթ շրջանին:**
— Համաձայն եմ, բայց դա ավելի շատ այն մարդկանց խնդիրն է, որոնց հարմար թվաց պահել եւ սկսեցին մոգոնել իրականության հետ կապ չունեցող խոսակցություններ:
— **Առավել շատ շրջանառվեց (եւ շրջանառվում է) Ձեր հնարավոր պաշտոնակազմի հարցը:**
— Նման հարց չկա ու չի կարող լինել: Ես կատարում եմ իմ պարտականությունները եւ, թող անհամեստության տպավորություն չթողնի, քաղաքապետարանն ավելի լավ, ավելի նպատակասլաց, ավելի արդյունավետ է աշխատում, քան երբեք: Կապանի քաղաքապետարանում չկա իշխանության վակուում, չկա ծրագրերի



ու անելիքների անհատականություն, չկան անպատասխան հարցեր: Կապանում կատարվող աշխատանքները ձեր աչքի առջեւ են, դրանք մեծամասամբ կատարվում են քաղաքային իշխանության նախաձեռնությամբ ու ծրագրերով: Իսկ բոլոր նրանց, ովքեր անպատեհ առիթից օգտվելով՝ քաղաքապետ դառնալու իրենց հավակնությունը չկարողացան թաքցնել, տեղյակ եմ պահում, որ աշխատող կրկին առաջադրվելու եմ Կապանի քաղաքապետի թեկնածու: Դա ոչ միայն իմ ցանկությունն է, այլեւ կապանցիների մեծ մասի: Եվ քաղաքային իշխանության դերը սենսացնելու, քաղաքապետի շուրջ անորոշության պատրանք ստեղծելու որոշ մարդկանց անթաքույց ձգտումը միայն խղճմանք է առաջացնում նույն այդ մարդկանց հանդեպ:

— **Դուք ՀՀ-ում անդամ եք, կուսակցության մեջ ունեք ակտիվ գործչի տարիների համբավ, թեեւ (հատկապես վերջին տարիներին) աչքի եք ընկել վերկուսակցական պահվածքով, ինչը (ասում ենք առանց վերապահումի) համայնքի ղեկավարի համար ճիշտ գործելակերպ է: Բայց... Ձեր անձի շուրջ առայսօր թեւածող խոսակցություններից մեկն էլ հարազատ կուսակցության՝ ՀՀ-ի հետ Ձեր հարաբերությունների սասանված վիճակն է: Կուզենա՞ք անդրադառնալ այդ խոսակցություններին:**

— Ժամանակին ՀՀ-ին անդամագրվել եմ գիտակցված, սրտի եւ հոգու թելադրանքով: Տարիների ընթացքում ՀՀ-ի գաղափարախոս-

ությունն ու ծրագիրն ինձ համար էլ ավելի հարազատ, էլ ավելի սրտամոտ են դարձել: Այնպես որ այդ խոսակցությունները նույնպես անհիմն են:

— **Խոսքը կուսակցության գաղափարների ու ծրագրերի հետ անհամաձայնության մասին չէ: Խոսքը, ըստ էության, նախընտրական որոշ առանցքային հարցերում Ձեր դիրքորոշման մասին է՝ կուսակցության գծից տարբերվող:**

— ՀՀ-ն բացառիկ լավ նախընտրական ծրագիր ու հռչակագիր է ընդունել: Դրանք իրագործելու դեպքում երկիրը դուրս կբերվի ստեղծված կացությունից: Եվ այսօր ոչ միայն քարոզում եմ այդ փաստաթղթերի դրույթները, այլեւ պատրաստ եմ իմ ուժերի ներածին չափով դրանք կյանքի կոչել: Միաժամանակ ամեն ինչ անում եմ, որ համամասնական ընտրակարգում կուսակցությունը ստանա վստահության ավելի մեծ ռեսուրս, քան նախորդ համամասնական ընտրություններում:

— **Իսկ մեծամասնական ընտրակարգում, չէ՞ որ ՀՀ-ն N38 ընտրատարածքում թեկնածու է առաջադրել, նկատի ունենք Գագիկ Գեորգյանին:**

— Գագիկ Գեորգյանը ոչ միայն իմ ընկերն ու բարեկամն է, այլեւ ՀՀ-ի երեսելի գործիչներից մեկը: Նրա պատգամավոր լինելը պատիվ կրեիք յուրաքանչյուր ընտրատարածքի: Նախընտրական որոշ իրողություններ, սակայն, նպատակավոր չեն համարել եւ կողմնակից են եղել

ուժերը համամասնական ընտրակարգի վրա կենտրոնացնելուն: Բացի դրանից, ուզում եմ մինչեւ վերջ անկեղծ լինել, կա նաեւ երկրորդ հանգամանքը, որն ավելի շատ մարդկային, բարոյական հենք ունի: N38 ընտրատարածքում հիմնական մրցակիցներն են Գագիկ Գեորգյանն ու Վահե Հակոբյանը: Ինչպես արդեն ասացի, Գագիկ Գեորգյանն իմ ընկերն ու բարեկամն է, ՀՀ-ի երեսելի գործիչներից մեկը: Վահե Հակոբյանն էլ Մաքսիմ Հակոբյանը 25 տարվա իմ ընկերն է, ով բազմաթիվ դժվարին իրավիճակներում կողքիս է եղել, ով նշանակալի ներդրում ունի Կապան քաղաքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում, ով այսօր էլ Կապանի քաղաքապետարանի հետ համատեղ ծրագրեր ունի՝ համայնքի հիմնախնդիրներին առնչվող: Ստեղծված իրավիճակում ես նախընտրել եմ չեզոքության, թեկնածուներից որեւէ մեկի օգտին քարոզ չանելու ուղեգիծը: Կարծում եմ՝ իմ ընտրողները, իմ համակիրներն ու գործընկերներն ինձ ճիշտ կհասկանան ու կզմանախառն անկեղծություն:

— **Դուք վերադարձել եք քաղաքապետի պարտականությունների կատարմանը, եւ կուզենալի՞նք մի հարց եւս պարզաբանել՝ կապված քաղաքային իշխանության գործունեության հետ: Հանրապետության ամենաբարձր ղեկավարներն ամիսներ շարունակ հայտարարում են, որ մայիսի 6-ի ընտրություններն իրենց արդարությամբ ու ազատությամբ**

աննախադեպ են լինելու, միջազգային չափանիշներին համապատասխան: Ընտրությունների անցկացման համար որոշակի անելիքներ, ըստ ընտրական օրենսգրքի, ունեն տեղական ինքնակառավարման մարմինները: Կարելի՞ է արձանագրել, որ Կապանի քաղաքապետարանը կատարել ու կատարում է այդ ոլորտում իրեն վերապահված լիազորությունները:

— Ընտրությունների նախապատրաստման ամբողջ շրջանում, հատկապես քարոզարշավի օրերին, Կապանում որեւէ խնդիր չի ծագել: Ընտրական օրենսգրքով նախատեսված մեր անելիքներն ամենայն պատասխանատվությամբ կատարել ու կատարում ենք: Ամենակարեւորը, կրկնում եմ, որեւէ քաղաքական ուժ, պատգամավորության որեւէ թեկնածու նախընտրական քարոզչություն իրականացնելիս, նախընտրական շտաբների համար տարածքներ զբաղեցնելիս խոչընդոտի չեն հանդիպել: Մեր լիազորությունների սահմաններում աջակցում ենք ընտրացուցակների առավելագույն ճշտմանը: Անհրաժեշտ պայմաններ ենք ստեղծել ընտրական տեղամասերի եւ ընտրական համընտրողությունների նորակա գործունեության համար: Հետեւում ենք գործընթացին եւ հարցեր առաջանալիս օպերատիվորեն լուծում տալիս:

— **Դե ինչ, շնորհակալություն հարցազրույցի համար, Ձեզ՝ առողջություն եւ հաջողություն:**

Հարցազրույցը՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՍԱՅՄԱՆ

Մեղրու սահմանապահներն ամփոփել են 2012թ. առաջին եռամսյակի արդյունքները



Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանը Գորիսում

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 13-ին Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Ռենոն Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի հրավերով Գորիսում էր:

Դեսպանի այցը պայմանավորված էր ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումների եզրափակմամբ: Դեսպանը նախ եղավ Գորիսի քաղաքապետարանում, որտեղ քաղաքապետը ողջունեց դեսպանի այցը և կարեւորեց հայ-ֆրանսիական բարեկամությունը, որը հիմք հանդիսացավ Վիեն-Գորիս քաղաքների համագործակցության համար: Քաղաքապետը հանգամանակից ներկայացրեց Վիեն-Գորիս քույր քաղաքների հարաբերությունների պատմությունը, որ սկիզբ է առել 1992 թվականից: 20 տարվա ընթացքում եղել են բազմաթիվ փոխայցելություններ, համատեղ իրականացվել են մի շարք կրթական-մշակութային, բնապահպանական, առողջապահական, զբոսաշրջության զարգացմանն ուղղված նախաձեռնություններ և այլ ծրագրեր: Այս տարի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մեծ շուքով տոնվելու է համագործակցության 20-ամյակը: «Շնորհակալություն հրավերի համար: Գորիս-Վիեն համագործակցության մասին տեղեկացված եմ և վստահորեն կարող եմ ասել, որ հայ-ֆրանսիական հարաբերությունների սիրտը բարախում է այստեղ՝ այս քաղաքում, հաճելիորեն զարմացած եմ նման սերտ համագործակցությունից ու մեծ հեռանկար եմ տեսնում այդ առումով», - ասաց դեսպան Անրի Ռենոն:

Այնուհետև դեսպանը քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի ուղեկցությամբ այցելեց Գորիսի քաղաքային պատկերասրահ, Գորիսի տուրիզմի տեղեկատվական կենտրոն, Վիենի պուրակ, ուր Միսակ Մամուչյանի հուշաքարին դրվեցին ծաղկեպսակներ: Երեկոյան հյուրերը Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում մասնակցեցին ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումների փակման արարողությանը:

Քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը և դեսպան Անրի Ռենոն շնորհակալագրեր ու պատվոգրեր հանձնեցին համայնքի դպրոցների ֆրանսերենի ուսուցիչներին, առարկայական օլիմպիադայում հաղթած աշակերտներին: Իսկ «Հայ-ֆրանսիական բարեկամություն» թեմայով հայտարարված նկարների և շարժարկությունների մրցույթում 1-3-րդ մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտները ստացան նվերներ:

ԱՆՆԱ ՂԱՎԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում ՌԴ անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության Մեղրու սահմանապահ ջոկատը 2012թ. առաջին եռամսյակում հայ-իրանական սահմանային տեղամասի պաշտպանության և պահպանության առաջադրանքները կատարել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի և սահմանամերձ տարածքի դինամիկ զարգացող իրավիճակի պայմաններում:

Օպերատիվ-ծառայողական առաջադրանքների կատարման ընթացքում բռնվել է 4 սահմանախախտ, սահմանային ռեժիմի խախտման երկու դեպք է արձանագրվել: Առգրավվել է 30 միավոր սառը զենք, 2.3կգ թմրամիջոց կամ թունամյութ, որից 1.8կգ՝ ՀՀ ոստիկանության հետ համատեղ գործողությունների արդյունքում, իսկ Մեղրու մաքսակետի աշխատակիցների համագործակցությամբ առգրավվել են ավելի քան 2 մլն դրամի մաքսանեզ ապրանքներ և բեռներ:

Ամիրաթեշտ է հատկապես նշել, որ պետական սահմանի պաշտպանության հարցերում սահմանապահները միշտ հենվել են տեղի բնակչության օգնության վրա: Այսպես, հաշվետու շրջանում կամավոր ժողովրդական պարտեզները համատեղ սահմանապահ վերակարգի կազմում ավելի քան 100 անգամ էլել են պահպանելու սահմանը, ինչը հնարավորություն



Հայաստան - Իրան պետական սահմանում:

է տվել նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ երկու անգամ նվազեցնել սահմանային գոտում արձանագրվող իրավախախտումների դեպքերը:

Սահմանային գոտում իրավախախտումների կրճատման գործում էական ներդրում է ունեցել սահմանապահների, մերձակա հա-

մայքների ինքնակառավարման մարմինների և ՀՀ իրավապահ կառույցների համատեղ գործունեությունը՝ Մեղրու տարածաշրջանում սահմանային ռեժիմի պահպանման, բնակչության շրջանում բացատրական աշխատանք տանելու, պրոֆիլակտիկ միջոցառումների համալիր իրացման ուղղությամբ:

Մեղրու սահմանապահ ջոկատի օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հուսալի պաշտպանության և պահպանության առաջադրված խնդիրները կատարվել են:

Мегринские пограничники подвели итоги в 1-м квартале 2012 года.

В первом квартале 2012 года Мегринский пограничный отряд Пограничного управления ФСБ России в Республике Армения выполнял задачи по защите и охране армяно-иранского участка границы в условиях динамично развивающейся обстановки на государственной границе и приграничной территории Республики Армения.

В ходе выполнения оперативно-служебных задач было задержано 4 нарушителя границы, два нарушителя пограничного режима и режима государственной границы, изъято более 30 единиц холодного оружия, около 2.3 кг. наркотических и отравляющих веществ, из которых 1.8 кг в результате совместных действий с Полицией РА, во взаимодействии с сотрудниками таможенного пункта «Мегри» контрабандных товаров и грузов на сумму более 2 миллионов драм.

Необходимо особо отметить, что в вопросах охраны государственной границы пограничники всегда опирались на помощь местного населения. Так в рассматриваемом периоде доб-



Հայաստան - Իրան պետական սահմանում:

ровольные народные дружины в составе совместных пограничных нарядов более 100 раз выходили на охрану границы, что позволило снизить количество правонарушений в пограничной полосе по сравнению с аналогичным периодом 2011 года в два раза.

Существенный вклад в снижении нарушений в пограничной

зоне внесла совместная деятельность пограничников, органов местного самоуправления приграничных общин и правоохранительных структур Республики Армения по реализации комплекса профилактических мероприятий, и разъяснительной работы среди населения приграничья по соблюдению пограничного режи-

ма на территории Мегринского района.

Результаты оперативно-служебной деятельности Мегринского пограничного отряда показывают, что поставленные задачи по надежной защите и охране государственной границы Армении выполнены.